NEW DEMOCRACY FUND

YIC YOUTH INITIATIVE CENTRE

ԻՐԱՋԵԿ ԸՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ

«Երիտասարդների ձայնը հանուն ժողովրդավարության» ծրագիրն իրականացվում է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ «Նոր ժողովրդավարություն հիմնադրամի» ֆինանսավորմամբ:

© Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ

NEW DEMOCRACY FUND

YIC YOUTH INITIATIVE CENTRE

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

«Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Դու ունե՛ս իշխանությունը ձևավորելու իրավունք՝ ընտրություններին և և հանրաքվեներին մասնակցելու միջոցով:
Սա քո հնարավորությունն է մասնակցելու պետության կառավարմանը և որոշելու քո երկրի, քո համայնքի զարգացման ուղին:»

ԻՐԱՋԵԿ ԸՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՔՈ ՁԱՅՆԸ ՔՈ ՈՒԺՆ Է

Կարճ ուղերձ

Ապագան սկսվում է հենց քո որոշումից: Մասնակցիր ընտրություններին և ձևավորիր քո երկրի վաղվա օրը:

Ի՞նչ է ընտրությունը

Ընտրությունը ժողովրդավարական պետության հիմնասյունն է: Սա այն գործընթացն է, որի միջոցով ԴՈՒ ձևավորում ես իշխանություն և անմիջականորեն մասնակցում քո երկրի կառավարմանը:

Երբ դու մասնակցում ես ընտրությանը՝

- ✓ Ազդում ես քո կյանքի որակի և երկրի ապագայի վրա:
- ✓ Ընտրում ես նրանց, ում վստահում ես երկրի կառավարումը:
- ✓ Կատարում ես քո քաղաքացիական պարտքը՝ իրացնելով սահմանադրական իրավունքդ:

Ինչո՞ւ է քո ձայնը կարևոր

Քո քվեն այն գործիքն է, որով որոշվում է.

1. Ո՞վ է ստանձնելու երկրի ղեկավարումը:
2. Ի՞նչ ուղղությամբ է զարգանալու մեր հասարակությունը:

ՀԻՇԻ՛Ր

ՔՈ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԿԱՆԳՆԵՑՆՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ. ՈՐՈՇՈՒՄԸ ԿԿԱՅԱՑՎԻ՝ ԱՌԱՆՑ ՔՈ ՁԱՅՆԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

- **Ընդհանուր.** Ընտրողները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:
- **Հավասար.** Յուրաքանչյուր ընտրող ունի ընդամենը մեկ ձայն, և բոլորի ձայները հավասարազոր են:
- **Ազատ.** Ոչ ոք իրավունք չունի քեզ ստիպել քվեարկել որևէ մեկի օգտին կամ խոչընդոտել քո մասնակցությունը:
- **Ուղղակի.** Դու քվեարկում ես անձամբ և անմիջապես այն ուժի օգտին, որին վստահում ես (առանց միջնորդների):
- **Գաղտնի.** Քո քվեարկությունը գաղտնի է. ոչ ոք իրավունք չունի ստուգել կամ իմանալ, թե ում օգտին ես քվեարկել:

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄԻԱՅՆ ԻՐԱՎՈՒՆՔ Է, ԱՅԼԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Ո՞վ կարող է քվեարկել

Դու ունես ընտրելու իրավունք, եթե մինչև քվեարկության օրը՝

- ✓ Լրացել է քո 18 տարին,
- ✓ Հանդիսանում ես ՀՀ քաղաքացի,
- ✓ Ընդգրկված ես ընտրողների ցուցակում:

! Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններին քվեարկելու իրավունք ունեն այն անձինք, ում 18 տարին լրացել է քվեարկության օրը և հաշվառված են տվյալ համայնքում:

Ըստ հաշվառման ժամկետի՝ ընտրողները բաժանվում են 3 խմբի.

1. ՀՀ քաղաքացիներ, ովքեր տվյալ համայնքում հաշվառված են առնվազն 6 ամիս:

2. ՀՀ քաղաքացիներ, ովքեր համայնքում հաշվառվել են 6 ամսից պակաս ժամկետով, բայց եթե նոր են զորացրվել բանակից կամ ազատվել են պատժի կրումից:

3. Օտարերկրացիներ կամ քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր տվյալ համայնքում ունեն առնվազն 1 տարվա հաշվառում:

Ո՞վ չի կարող քվեարկել

Նույնիսկ վերը նշված պայմանների առկայության դեպքում, ընտրելու իրավունք չունեն այն անձինք՝

- Ովքեր դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են անգործունակ,
- Ովքեր դատապարտվել են դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար և օրինական ուժի մեջ մտած դատավճռով կրում են պատիժը (քրեակատարողական հիմնարկներում):

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ

Որպեսզի քո քվեն լինի կշռադատված և արդյունավետ մի՛ սահմանափակվիր՝

- լոզունգներով,
- գեղեցիկ հոլովակներով,
- այլոց կարծիքով,
- կարծրատիպերով:

Ուսումնասիրի՛ր քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերը:

Համեմատի՛ր և փորձի՛ր հասկանալ, թե որ ուժի առաջարկներն են համընկնում քո պատկերացումների հետ:

Վերլուծի՛ր, փնտրի՛ր իրատեսական լուծումներ և կատարի՛ր գիտակցված ընտրություն:

Ստուգի՛ր փաստաթղթերդ.

Տեղմասային կենտրոն գնալիս համոզվի՛ր, որ ունես քվեարկության համար անհրաժեշտ վավեր փաստաթղթերից մեկը.

- Նույնականացման քարտ (ID քարտ),
- Կենսաչափական անձնագիր,
- Ոչ կենսաչափական անձնագիր
- Վերոնշյալ փաստաթղթերին փոխարինող փաստաթուղթ՝ տրված ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:

Վավերականության ժամկետի մեջ գտնվող փաստաթուղթ չունենալը հիմք չէ քվեարկությանը չթողնելու համար. կարող ես քվեարկել նաև քո վավերականության ժամկետն ավարտված փաստաթղթով:

Հաշվի ա՛ռ, որ ընտրների ցուցակում քո տվյալները ընդգրկված կլինեն, եթե դու

- ունես հաշվառում Հայաստանի Հանրապետությունում և
- քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում ունեցել են անձը հաստատող վավեր փաստաթուղթ:

Ճշտի՛ր քո տեղամասը և տվյալները

Որպեսզի ընտրության օրը ժամանակ չկորցնես, նախապես ստուգի՛ր քո տվյալները ընտրողների ցուցակում.

Առցանց.

Այցելի՛ր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայք՝ www.elections.am:

Տեղում.

Այցելի՛ր քո բնակության վայրի ընտրատեղամաս և փնտրի՛ր անունդ փակցված ցուցակներում:

* Եթե քո տվյալները չես գտնում ընտրողների ցուցակում, ոչ ուշ քան քան 12 օր առաջ, կարող ես դիմում ներկայացնել ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: Եթե ունես էլեկտրոնային ստորագրություն կամ «մոբայլ այ դի», դիմումը հնարավոր է ներկայացնել նաև առցանց Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ https://e-request.am/hy

Դիմումի ձև կարող եք գտնել այստեղ

https://res.elections.am/images/downloads/11_N.app.accessibility2025.docx



ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՆՑՆՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Քվեարկություն՝ 7 պարզ քայլով

1. **Մուտք.** Մոտենո՛ւմ ես քո ընտրատեղամաս (ժամը 08:00-20:00-ն):

2. **Նույնականացում.** Ներկայացնո՛ւմ ես անձնագիրդ կամ ՆՔ/ID քարտդ մասնագետին, ով այն անցկացնում է տեխնիկական սարքով և ստանում քվեարկության կտրոնը:

3. **Ստորագրություն.** Գրանցվում ես ընտրողների ցուցակում՝ ստորագրելով քո անվան դիմաց:

4. **Ստացում.** Հանձնաժողովի անդամից ստանում ես քվեաթերթիկները և քվեարկության ծրարը:

5. **Քվեախցիկ.** Մտնում ես քվեախցիկ միայնակ: Ընտրում ես այն ուժի քվեաթերթիկը, որին կողմ ես, և դնում ծրարի մեջ (մնացած քվեաթերթիկները գցում ես առանձին արկղի մեջ):

6. **Դրոշմում.** Մոտենում ես քվեատուփի մոտ գտնվող անդամին, ով առանց քո փոխարեն ծրարին դիպչելու, փակցնում է ինքնասոսնձվող դրոշմանիշը:

7. **Քվեարկում.** Ծրարը գցում ես քվեատուփի մեջ:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈ՛ՒՄ ԵՆՔ, ԴՈՒ ՔՎԵԱՐԿԵՑԻՐ:

Կարևոր կանոններ՝ անվտանգության համար

- **Գաղտնիություն.** Ոչ ոք իրավունք չունի ներկա լինել քվեախցիկում, երբ դու կատարում ես ընտրությունդ:
- **Անկախություն.** Մի՛ ցույց տուր ընտրությունդ ուրիշին և մի՛ թույլ տուր, որ քեզ հրահանգեն:

! Կարևոր է. Քվեարկության գաղտնիությունը խախտելը առաջացնում է քրեական պատասխանատվություն:

ԻՐԱՎՈՒՆՔ + ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ = ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Արդար ընտրությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ յուրաքանչյուրս գիտակցում ենք մեր դերը:

Քո իրավունքները

- Ազատ կամք. Դու ինքնուրույն ես որոշում՝ ում ձայն տալ:
- Գաղտնիություն. Ոչ ոք իրավունք չունի տեսնել կամ ստուգել քո ընտրությունը:
- Անխոչընդոտ մասնակցություն. Որևէ մեկը չի կարող քեզ արգելել մտնել տեղամասային կենտրոն կամ քվեարկել:
- Տեղեկացվածություն. Դու իրավունք ունես ստանալ ամբողջական տեղեկատվություն թեկնածուների և գործընթացի մասին:

Քո պարտականությունները

- Օրինապահություն. Հարգել ընտրական կարգը և տեղամասում գործող կանոնները:
- Գաղտնիության պահպանում. Չցուցադրել քվեարկված թերթիկը և չլուսանկարել այն:
- Ազնվություն. Չներգրավվել և չաջակցել որևէ ապօրինի գործընթացի:

Պատասխանատվություն խախտումների համար

Ընտրական կարգի խախտումը միայն «սխալ» չէ, այն առաջացնում է իրավական պատասխանատվություն:

Քրեական պատասխանատվություն	Վարչական պատասխանատվություն
Քվեի առքուվաճառք (ընտրակաշառք տալը, ստանալը, միջնորդելը)	Ընթացակարգերի տեխնիկական խախտում
Շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը խախտելը	Քարոզչության կանոնների խախտում
Արդյունքների կեղծում կամ լցոնում	Լռության օրվա կանոնների խախտում
Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկություն կամ դրա փորձ	
Ձենքով տեղամասային կենտրոն մուտք գործելը	

Ի՞նչ անել, եթե նկատում ես խախտում

Մի՛ եղիր անտարբեր: Եթե տեսնում ես ապօրինություն, անմիջապես տեղեկացրո՛ւ.

- ✓ Տեղամասային հանձնաժողովի նախագահին,
- ✓ Տեղում գտնվող դիտորդներին և լրագրողներին,
- ✓ Իրավապահ մարմիններին (Ոստիկանություն):

ՀԻՇԻ՛Ր

ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՀԵՆՑ ՔԵԶՆԻՑ:

Խուսափի՛ր այս սխալներից

- ✗ **Փաստաթղթի բացակայություն.** Առանց անձնագրի կամ ՆՔ/ID քարտի դու չես կարողանա քվեարկել (նույնիսկ եթե բոլորը քեզ ճանաչում են):
- ✗ **Անհայտ տեղամաս.** Տեղամասը վերջին պահին փնտրելը կարող է հանգեցնել ուշացման. ճշտի՛ր հասցեն նախապես:
- ✗ **Չկողմնորոշված քվեարկություն.** Քվեախցիկում որոշում կայացնելը հաճախ հանգեցնում է պատահական ընտրության: Որոշի՛ր նախապես:

ՀԻՇԻ՛Ր

Քվեարկությունը լոկ իրավունք չէ, այն քո քաղաքացիական պատասխանատվությունն է:

Մի՛ թերագնահատիր քո դերը. Անգամ մեկ ձայնը կարող է լինել վճռորոշ երկրի ապագայի համար:

Եթե ուզում ես ինքդ, որպես քաղաքացի վերահսկել ընտրությունները ապա իմացիր՝

- Ընտրողների ցուցակները տեղադրվում են կայքում, համացանցում, քվեարկությունից հետո ստորագրված ցուցակները տեղադրվում են համացանցային կայքում:
- Տեղմասային կենտրոններից գերակշիռ մասից լինելու է քվեարկության ընթացքի և ամփոփման գործընթացի ուղիղ հեռարձակում:
- Բոլոր տեղմասերի արդյունքները հրապարակվում են տեղամասային կենտրոններում, ԸԸՀ նստավայրերում, ԿԸՀ կայքում:

ԱՄԵՆ ԻՆՉ, ԲԱՑԻ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԻ ՔՎԵԻՑ, ՎԵՐԱՀՍԿԵԼԻ Է:

Ուղեցույցի հեղինակներ՝

Վանուհի Գասպարյան, իրավաբան

Արմեն Սմբատյան, ընտրական փորձագետ

Ծրագրի խորհրդատու՝

Արթուր Նաջարյան, երիտասարդության հարցերով փորձագետ